Հավելված N2
2023 թվականի հունվարի 23-ին կնքված
«1032-11003/23-ԵՅ3» պայմանագրի

ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ N2

1. Ընդհանուր տեղեկատվություն

| | |
|---|---|
| Ծրագրի անվանում | «Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի տրամադրում ցերեկային կենտրոնում» |
| Դրամաշնորհի N | ԱՍՀՆ-ԴՄ-ՑԿՏԾ-23/5-1 |
| Դրամաշնորհատու կազմակերպություն | ՀՀ ԱՍՀՆ |
| Դրամաշնորհառու կազմակերպություն | «Տարեցների առողջության և խնամքի ապահովման ասոցիացիա» ՀԿ |
| Ծրագրի իրականացման ժամանակահատված | 01.01.2023- 31.12.2023 |
| Հաշվետու ժամանակահատված | 01.07.2023-30.09.2023 |
| Ներկայացման օր | 07.11.2023 |
| Հաշվետվության պատասխանատու<br><br>(անուն, ազգանուն, պաշտոն) | Արթուր Թորոսյան, նախագահ |

2. Բովանդակային հաշվետվություն
2.1. Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:

Հաշվետու ժամանակահատվածում աշխատանքային պլանով և հավելված 1-ով նախատեսված է եղել կատարել հետևյալ գործողությունները՝

1. Ակտիվ ժամանցի և զբաղվածության ապահովում
2. Շարունակական կրթություն և ինքնուրույնության խթանում
3. Գլխուղեղի առողջության խթանում և պահպանում

2.2. Խնդրում ենք նկարագրել ծրագրի առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների, նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ ծրագրի խնդիրների/նպատակի իրականացմանը:

Հաշվետու ժամանակահատվածում ցերեկային կենտրոնի ծառայությունից օգտվել է 37 այցելու, որոնցից 24-ը՝ ՄՍԾ ուղեգրով՝ Երևանի տարբեր համայնքներից: Այցելուները կենտրոն են հաճախել շաբաթական հինգ օր՝ 2-5 ժամ տևողությամբ, մի շարք այցելուների դեպքում՝ ավելի երկար: Յուրաքանչյուր օրվա ընթացքում կազմակերպվել է սննդային ընդմիջում՝ թեյ, սուրճ, թխվածքաբլիթ և այլն: Այցելուների հետ աշխատանքն արտացոլվել է հետևյալ երեք հիմնական ուղղություններում՝ ա. ակտիվ ժամանցի և զբաղվածության ապահովում, բ. շարունակական կրթություն և ինքնուրույնության խթանում, գ.գլխուղեղի առողջության խթանում և պահպանում:

Շաբաթական մեկական անգամ գործել է անգլերենի ակումբը, ֆիլմասերների ակումբը, ասեղնագործության խմբակը, կարպետագործության խմբակը, թաղիքագործության խմբակը, երգի և պարի խմբակը, որոնց այցելուները մասնակցել են ըստ իրենց հետաքրքրության: Շաբաթական 1 անգամ կազմակերպվել է արտթերապևտիկ և հոգեբանական խմբային աշխատանք՝ ուղղված տարաբնույթ խնդիրների

| |
|---|
| հաղթահարմանը՝ տագնապայնություն, կոնֆլիկտ, սթրեսակայունություն, ինքնագնահատական, ռեսուրսների բացահայտում և այլն: Յուրաքանչյուր օր կազմակերպվել է ֆիզիկական և գլխուղեղի առողջության խթանման հանդիպումներ՝ նախատեսված 3 անգամի փոխարեն, իրականացվել է 4 էքսկուրսիա: Այցելուների շարունակական կրթության և ինքնուրույնության խթանման նպատակով կազմակերպվել է 4 սեմինար՝ առողջության, իրավունքի, հոգեբանության ոլորտներին առնչվող թեմաներով: Կենտրոնի առօրյան, սակայն, չի սահմանափակվել միայն վերոնշյալ միջոցառումներով. կազմակերպվել են նաև միջմշակութային ճանաչմանը նպաստող հանդիպումներ Կենտրոնի արտասահմանցի կամավորների միջոցով, մասնակցություն Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի համերգներին, ինչպես նաև միջսերնդային հաղորդակցմանը նպաստող հանդիպումներ երիտասարդների մասնակցությամբ:<br><br>Ամիսը մեկ անգամ կազմակերպվել է «Ուտիս տատի խոհանոցից» խորագիրը կրող խոհանոցային օր, որի ընթացքում այցելուները համատեղ պատրաստել են ազգային որևէ ուտեստ, ինչն արդեն ավանդույթ է դարձել Կենտրոնում՝ նպաստելով մշակութային ճանաչմանը, հարաբերությունների բարելավմանը, ազգային խոհանոցի հին բաղադրատոմսերի վերհանմանը: Իրականացվել է այցելուների հոգեբանական վիճակի գնահատում և կենտրոնի ծառայությունների ու դրանց որակի վերաբերյալ հարցում: Այցելուների կարծիքները հաշվի են առնվել հետագա ամիսների ընթացքում նոր զբաղմունքների մշակման և իրականացման համար: |

Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)

| |
|---|
| Ցերեկային կենտրոնի առօրյան լուսաբանվում է Ասոցիացիայի ֆեյսբուքյան էջում (https://www.facebook.com/ahaop) և կայքում (www.gerontology.am): |

2.3. Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են ծրագրի գործողությունների իրականացմանը:

| |
|---|
| Ծրագրի գործողությունների իրականացմանը խոչընդոտող խնդիրներ չեն ծագել հաշվետու ժամանակահատվածում: |

2.4. Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շահառուների ցուցակը):

- Ակտիվ ժամանցի և զբաղվածության ապահովում
- Շարունակական կրթություն և ինքնուրույնության խթանում
- Գլխուղեղի առողջության խթանում և պահպանում

2.5. Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել ծրագրի աշխատանքային պլանով, բայց իրականացվել են ծրագրի նպատակին հասնելու համար:

| |
|---|
| |

Կ Ա Տ Ա Ր Ո Ղ
«Տարեցների առողջության և խնամքի ապահովման ասոցիացիա» հասարակական կազմակերպություն
Նախագահ ՝ Ա. Թորոսյան

Digitally signed by GHAZAZYAN LIANA 6201810706

----------------------------------------
(ստորագրություն)